

Կոտայքի մարզպետն աշխատանքային այցով Մեղրաձորում էր 05.10.2018

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը փոխմարզպետ Առնակ Ավետիսյանի ուղեկցությամբ երեկ աշխատանքային շրջայց ունեցավ Մեղրաձոր խոշորացված համայնքում: Մարզպետն այցելել է մանկապարտեզներ, դպրոցներ, Մեղրաձոր վարչական շրջանի մարզամշակութային կենտրոն, լսել քաղաքացիներին ու տարբեր կառույցների աշխատակիցների մտահոգությունները:

Մի քանի դպրոցների աշխատակիցներ ունեին աշխատավայր հասնելու խնդիր՝ պայմանավորված տրանսպորտային ցանցի սղությամբ: Մարզպետի կողմից առաջարկվեց կարճաժամկետ լուծում՝ գործատուի միջոցներով տրանսպորտի հատկացում՝ մինչև որ խնդիրն հիմնական լուծում կտրվի մարզի տրանսպորտային ցանցը փոփոխելու կոնտեքստում: Մոտ օրերս նախատեսվում է համայնքը սպասարկող ընկերության ներկայացուցչի հետ հանդիպում ունենալ:

Աղավնաձորում քննարկվեց մանկապարտեզը մասնակի կամ ամբողջությամբ վերանորոգելու հարցը, մանրամասներին ծանոթանալուց հետո որոշում կկայացվի այս ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:

Արտավազի դպրոցում ուսուցչական կազմի հետ հանդիպմանը մարզպետը վստահեցրեց, որ նախկինում փակման վտանգի առաջ կանգնած այս դպրոցը շարունակելու է գործել՝ զարգացման տեսլականով:

Այցի ավարտին Ռոմանոս Պետրոսյանը եղավ նաև նոր վերանորոգված մանկապարտեզում, որի բացումը նախատեսվում է նոյեմբեր ամսին: